«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2016 թվականի

Ուսումնաարտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական փորձառությունների կազմակերպման վիճակի և դեկանատների ու ամբիոնների խնդիրների մասին

Լսելով և քննարկելով **«Ուսումնաարտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական փորձառությունների կազմակերպման վիճակը և դեկանատների ու ամբիոնների խնդիրները»** հարցը (զեկուցող՝ ուսանողների և շրջանավարտների հետ աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու Ս.Ս.Խաչատրյան), գիտական խորհուրդն արձանագրում է. ռեկտորատը, կարիերայի և մարքեթինգի կենտրոնը, դեկանատները և թողարկող ամբիոնները 2015-2016 ուսումնական տարում որոշակի աշխատանքներ են կատարել ուսանողության ուսումնաարտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական փորձառությունները պատշաճ մակարդակով կազմակերպելու և անցկացնելու ուղղությամբ: Շարունակվել է կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնման գործընթացը, ինչի արդյունքում կնքվել են 15 նոր պայմանագրեր և ՀՊՏՀ-ի հետ համագործակցող պետական մարմինների և մասնավոր կազմակերպությունների թիվը հասել է շուրջ 100-ի: Թե՛ կարիերայի և մարքեթինգի կենտրոնը, թե՛ թողարկող ամբիոնները որոշ ջանքեր են գործադրել ուսանողների փորձառության վայրերի ընտրության և տեղավորման ուղղությամբ:

2015-2016 ուսումնական տարվա ընթացքում ուսումնաարտադրական, գիտահետազոտական և գիտամանկավարժական փորձառություններ են կազմակերպվել 2274 ուսանողի համար (նախորդ տարվա 1512-ի փոխարեն), որոնցից 1683-ը (շուրջ 74%)՝ խոշոր կազմակերպություններում՝ համալսարանի և կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի հիման վրա: Այս ցուցանիշի բարելավման նպատակով նոր պայմանագրեր կնքելու գործում թողարկող ամբիոնները պետք է գործուն աջակցություն ցուցաբերեն ռեկտորատին ու կարիերայի և մարքեթինգի կենտրոնին: Եթե նախորդ տարի հեռակա ուսուցման մագիստրատուրայի ուսանողների մի ստվար զանգվածը փորձառության վայրերի բացակայության պատճառով տեղաբաշխվել էր համալսարանի ամբիոններում ու կարիերայի և մարքեթինգի կենտրոնում, ապա հաշվետու տարում հեռակա ուսուցման մագիստրատուրայի բոլոր ուսանողները տեղաբաշխվել են պետական կամ մասնավոր հիմնարկ-ձեռնարկություններում:

Ուսանողների փորձառություններն ուսումնական գործընթացի կարևոր բաղկացուցիչ մասն են և ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերմանը միտված

կրթական բարեփոխումները թելադրում են, որ համապատասխան փոփոխություններ իրականացվեն ինչպես բուհ-կազմակերպություն համագործակցության ձևաչափերում, այնպես էլ փորձառության ծրագրերում և կազմակերպման ձևերում:

Անցած ուսումնական տարիներին փորձառության արդյունավետ կազմակերպման խոչընդոտները բաժանվել էին երեք խմբի, որոնք արդիական են նաև այժմ: Դրանք են՝

1. կազմակերպական,
2. բովանդակային,
3. հսկողության և գնահատման:

Կազմակերպական առումով հստակ կանոնակարգված չէ թողարկող ամբիոններից նշանակված ղեկավարների այցելությունները փորձառության վայրեր: Դա հատկապես կարևոր է փորձառության կազմակերպման առաջին օրերին, երբ օպերատիվ լուծում պահանջող տարբեր բնույթի խնդիրներ են ծագում: Հակառակ պարագայում կազմակերպությունները հաճախ տարբեր պատճառաբանություններով ուսանողների հաճախումների անհատական ժամանակացույցեր են կազմում (կանչում են շաբաթական մեկ-երկու անգամ) կամ ետ են ուղարկում, ինչի պատճառով էլ ի հայտ են գալիս ուշացած նամակ-ուղեգրերը, փորձառության վայրի փոփոխության հետ կապված դժվարությունները: Փորձառության արդյունավետությունը շեշտակի նվազում է նաև այն դեպքերում, երբ ավարտական աշխատանքների թեմաները չեն համապատասխանում փորձառության վայրի գործունեությանը:

Անկասկած, և՛ ռեկտորատը, և՛ ֆակուլտետները, և՛ թողարկող ամբիոնները որոշ աշխատանքներ են կատարել փորձառությունն ավելի բովանդակալից դարձնելու առումով: Սակայն դեռևս շատ են թերություններն ու բացթողումները և այստեղ կարևորն այն է, որ փորձառության ծրագրերի հարցերը դեռևս միտված չեն ուսանողների տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների աճին:

Թերությունների հաջորդ խումբը կապված է վերահսկողության և գնահատման հետ: Իրողությունն այն է, որ հաճախումների նկատմամբ թույլ վերահսկողությունն ու անտարբերությունը կամ դրա բացակայությունը ոչ միայն կազմակերպությունների կողմից է, այլև համապատասխան ամբիոնների: Փորձառություն անցնող ուսանողներին միայն շաբաթական մեկ անգամ համալսարան (ամբիոն) կանչելու միջոցով նրանց հաճախումները հսկելու պրակտիկան այլևս դարձել է անարդյունավետ: Հսկողության այդ եղանակը, իհարկե, շատ ավելի դյուրին է դասախոսների համար, սակայն իրեն չի արդարացնում և փորձառությունների հաշվետվությունների պաշտպանությունից անհիմն բարձր գնահատականներ նշանակելու պատճառներից մեկն է համարվում:

Փորձառություններն արդյունավետ կազմակերպելու, առկա թերությունները վերացնելու նպատակով՝ համալսարանի գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **Ուսումնաարտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական փորձառությունների կազմակերպման բնագավառում կատարված աշխատանքը գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել կարիերայի և մարքեթինգի կենտրոնին, թողարկող ամբիոնների վարիչներին՝**
   1) քայլեր ձեռնարկել ինչպես պետական կառավարման մարմինների, այնպես էլ տնտեսության բոլոր ոլորտների կազմակերպությունների հետ համագործակցության նոր պայմանագրեր կնքելու ուղղությամբ:

3. **Հանձնարարել թողարկող ամբիոնների վարիչներին՝**
   1) արդիականացնել փորձառությունների ծրագրերը, դրանք համապատասխանեցնել կրթական բարեփոխումների նոր պահանջներին և մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 10-ը ուսումնամեթոդական աշխատանքների և աշխատաշուկայի հետ համագործակցության բաժին ներկայացնել փորձառությունների նորացված ծրագրերը.
   2) խստացնել հսկողությունը փորձառություն անցնող ուսանողների հաճախումների նկատմամբ,
   3) պահանջել ղեկավարներից, որ փորձառության ընթացքում առնվազն երկու շաբաթը մեկ անգամ լինեն փորձառության վայրերում՝ ինչպես ծրագրով տրված հանձնարարականների կատարման ընթացքը հսկելու, այնպես էլ կազմակերպություններից նշանակված ղեկավարների հետ փորձառության արդյունավետության բարձրացման գործնական հարցերը քննարկելու համար.
   4) բացառել փորձառությանը չհաճախող ուսանողների հաշվետվություն ներկայացնելու և պաշտպանելու հնարավորությունը:

4. **Հանձնարարել ուսումնամեթոդական աշխատանքների և աշխատաշուկայի հետ համագործակցության բաժնին՝**
   1) խիստ վերահսկողություն սահմանել բոլոր մասնագիտություններով փորձառությունների ծրագրերն արմատապես փոխելու, դրանցում գործնական առաջադրանքների բաղադրիչներն ուժեղացնելու և կազմակերպությունների գործունեության բնույթին ու առանձնահատկություններին համապատասխանեցնելու նկատմամբ:

5. **Սույն որոշումը քննարկել դեկանատների և թողարկող ամբիոնների նիստերում ու համապատասխան աշխատանքներ կատարել նշված հանձնարարականների կատարման համար:**

6. **Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել պրոռեկտորներ Ս.Ս.Խաչատրյանին և Մ.Ն.Հարությունյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

04.05.2016 թ.